Հաստատվում է
գիտաքարտուղար
Ա.Սիմոնյան
16.09.2024թ.

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ԲԱԺՆԻ ՊԵՏ ՆԱԻՐԱ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու ժամանակահատվածում՝ 13.05.2024թ.-13.09.2024թ. Բարձրագույն կրթության և գիտության քաղաքականության վարչության քաղաքականության և զարգացման ծրագրերի բաժնում ծանոթացել եմ Պայմանագրով սահմանված իրավունքներին և պարտականություններին, Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կանոնադրությանը, ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 16-ի N 650-Լ որոշմամաբ հաստատված ՀՀ կառավարության 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագրում ներառված բարձրագույն կրթության և գիտության ոլորտներին վերաբերող միջոցառումներին, ինչպես նաև «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքներին և այլ իրավական ակտերին:

Նշված ժամանակահատվածում մասնակցել եմ Քաղաքականության և զարգացման ծրագրերի բաժնի գործառույթներից բխող հետևյալ աշխատանքներին.

✓ ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի կատարումն ապահովող Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեին ամրագրված միջոցառումների կատարման ընթացքի վերաբերյալ հաշվետվությունների մշակման աշխատանքներին:

✓ «Կին ղեկավարների առաջխաղացմանն ուղղված ծրագիր 2024» մրցույթի հրավերի փաթեթի նախապատրաստման աշխատանքներին, գիտական թեմաների հայտերի ընդունման, ուսումնասիրության, վերլուծության, ինչպես նաև համապատասխան մրցույթի շրջանակներում ֆինանսավորման երաշխավորված գիտական թեմաների իրականացման համար պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին պայմանագրերի մշակման աշխատանքներին:

✓ Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում առաջատար հետազոտությունների աջակցության գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթի ընթացիկ հաշվետվությունների ընդունման գործնընթացին:

✓ Բաժնի լիազորությունների շրջանակներում պատասխանել եմ այլ գերատեսչություններից եկած նախագծերի վերաբերյալ գրություններին, տրամադրել եմ նախագծերին կարծիքներ և առաջարկներ, ինչպես նաև մասնակցել եմ այլ գրությունների նախապատրաստման աշխատանքների իրականացմանը:

ԲԿԳՔ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԲԱԺՆԻ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՍՄԻԿ ՍԻՄՈՆՅԱՆ

16.09.2024 թ.